Արձանագրություն N 3

«ՍԷԴ-Սիսթեմս» ՍՊԸ-ի կարիքների համար ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

03.09.2021թ., ժամը՝ 15:00-ին, ՀՀ, ք□ Երևան, Կոմիտաս 59/9, 2-րդ հարկ, ProAccounting-ի գրասենյակում

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

- Սամվել Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝

- Նորայր Ասլանյան
- Արմեն Հարությունյան

Քարտուղար՝ Մերի Մկրտչյան

1. «ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Մկրտչյան)

1. ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով ընթացակարգին թղթային եղանակով ներկայացված հայտերը:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:

3. «ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի թղթային եղանակով հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

4. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

5.Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

1. ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով ընթացակարգին թղթային եղանակով ներկայացված հայտերը:

(Մ. Մկրտչյան)

1.1 «ՍԷԴ-Սիսթեմս» ՍՊԸ–ի կարիքների համար համակարգիչների, սարքերի, սարքավորումների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում թղթային եղանակով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1. | «ՍԵԳ» ՍՊԸ |
| 2□ | «ԷՅ.ԷՄ.ԵՔՍ Միկրո» ՍՊԸ |
| 3. | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

(Մ. Մկրտչյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Չ/հ | Գնման առարկա | Չ/մ | Քանակը | Նախահաշվային պլանավորած գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Հ/հ | Անվանումները | Գնային առաջարկ /ՀՀ դրամ/ | | |
| | | | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Դյուրակիր համակարգիչ | հատ | 12 | 2,700,000 | 1 | «ԷՅ.ԷՄ.ԵՔՍ Միկրո» ՍՊԸ | 2,230,000 | 446,000 | 2,676,000 |
| | | | | | 2 | «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | 3,690,000 | 738,000 | 4,428,000 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Չաւմով կառավարվող էկրաններ | հատ | 12 | 1,320,000 | Գնային առաջարկի բացակայություն | | | | |
| 3 | Գնդիկավոր պտուտակ (գծային մոդուլ) | հատ | 12 | 1,320,000 | 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | 1,320,000 | - | 1,320,000 |
| 4 | Մայրական սալիկ | հատ | 12 | 144,000 | 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | 144,000 | - | 144,000 |
| 5 | Սնուցման բլոկ | հատ | 12 | 84,000 | 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | 84,000 | - | 84,000 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

**3. «ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի թղթային եղանակով հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

3.1 Մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են «ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**4. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Մ. Մկրտչյան)

4.1 Քանի որ «ՍԷԴ-Սիսթեմս» ՍՊԸ-ի կարիքների համար **«Համակարգիչների, սարքերի և սարքավորումների»** ձեռքբերման նպատակով կազմակերպված **«ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, գնահատող հանձնաժողովը 03.09.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով **08.09.2021թ. ժամը 13:00-ին 30 րոպե տևողությամբ,** ՀՀ, ք□ Երևան, Կոմիտաս 59/9, 2-րդ հարկ, ProAccounting-ի գրասենյակում բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակցի՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ի հետ կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը նշված մասնակցին էլեկտրոնային ծանուցման միջոցով միաժամանակ ծանուցեց նշված բանակցությունների վարման օրվա, Ժամի և վայրի մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

**5. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Մ. Մկրտչյան)

5.1 **ՍԷԴՍԹ-ԳՀԱՊՁԲ-21/4»»** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել 08.09.2021թ.-ի ժամը 13:00-ին, «ՍԷԴ-Սիսթեմս» ՍՊԸ-ի ի ՀՀ, ք□ Երևան, Կոմիտաս 59/9, 2-րդ հարկ, ProAccounting-ի գրասենյակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Սամվել Խաչատրյան

հանձնաժողովի անդամներ՝ ____________ Նորայր Ասլանյան

____________ Արմեն Հարությունյան

հանձնաժողովի քարտուղար՝ ____________ Մ. Մկրտչյան